

ՄԱՆԿԱՊԱՏՄԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Նոյեմբեր 2020



Միրելի Աշակերտ,

27 Սեպտեմբեր 2020-ին, թուրք-ազերիական բանակը սուրիացի, լիպիացի և աֆղան վարձկան ահաբեկիչ (terrorist) զինուորներով յարձակեցաւ Արցախի խաղաղ ժողովուրդին վրայ, օգտագործելով ծանր ու արգիլուած ռումբեր: Իրենց բարբարոս սովորութեան համաձայն, անոնք վայրագօրէն ունրակոծեցին Արցախի մայրաքաղաք՝ Ստեփանակերտը, ինչպէս նաև Շուշին, Մարտունին և Հատրուշը:

Արցախի դպրոցները, խանութներն ու տուները քանդելէ զատ, թշնամին նաև հարուածեց Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Շուշիի այս նշանատու եկեղեցին շինուած է 1868-1887 թուականներուն և կը նկատուի Արցախի խորհրդանիշներէն մէկը:

Այս առաջին անգամը չէ որ թշնամին կը հարուածէր Շուշին ու իր Ղազանչեցոց եկեղեցին: Ասկէ 100 տարիներ առաջ, 23 Մարտ 1920-ին, նոր ստեղծուած Ազրայէճանական Հանրապետութիւնը թրքական բանակի օգնութեամբ յարձակած էր Շուշիի վրայ, սպաննած էր հոն բնակող հայերը և քարուքանդ ըրած էր Շուշիի հայերու աւելի քան 200 տարուայ ճարտարապետական յուշարձանները: Այդ շրջանին էր, որ ազերի-թուրքերը Շուշիի Ղազանչեցոց եկեղեցիի գմբէթը քանդած էին և տաճարը օգտագործած՝ որպէս ռումբերու ու հրթիռներու պահեստանոց: Թուրքերը ամէն ինչ փորձեցին վերջնականապէս ոչնչացնելու համար հայերը, բայց չյաջողեցան:

1988-ին, Արցախի հայութիւնը ոտքի ելաւ պահանջելով վերամիանալ Հայաստանին: Դարձեալ սկսան կռիւները, որոնք վերջ գտան հերոս արցախցիներու վճռական յաղթանակով: Աւելին, 1991-ի Սովետական Միութեան փլուզումէն ետք, Արցախը իր անկախութիւնը յայտարարեց 2 Սեպտեմբեր 1991-ին: Անոնք մեծ երանդով վերաշինեցին իրենց քանդուած քաղաքները և 1998-ին վերականգնեցին նաև Շուշիի Ղազանչեցոց եկեղեցիի գմբէթը:

Արցախի 1920-ի ջարդերէն 100 տարիներ անց, այսօր կը տեսնենք թէ ինչպէս, Ազրայէճանի և Թուրքիոյ նպատակները տակաւին նոյն են: Անոնք կ'ուզեն գրաւել մեր հողերը և ոչնչացնել մեզ վերջնականապէս, իրականացնելու համար իրենց փանթուրանական ծրագիրը:

Մեր պարտքն է միշտ յիշել մեր հին թէ նոր նահատակները, որոնք իրենց արիւնը թափեցին, որ մեր հայրենիքը ըլլայ անկախ և մենք որպէս հայեր, ապրինք ազատ:

Փսոնք մեր նորօրեայ հերոսներուն:

Կեցցէ՛ Արցախը:

Կեցցէ՛ Հայաստանը:

Կեցցէ՛ սփիւոքահայութիւնը:



ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ՀԱՅ ՄՕՐ ԴԵՐԸ

Հայ ազգը ապրելու ու զարգանալու համար պետք է ունենայ առողջ հայ ընտանիք, հայ դպրոց, հայ եկեղեցի, հայ մշակույթ և հայրենիք:

Սփիռոքի տարածքին, բոլորս ալ հայրենիքէն հեռու ըլլալով առաւել ևս պետք է ուշադիր ըլլանք պահելու մեր ընտանիքը մաքուր և առողջ: Սիրենք հայ դպրոցը, յաճախենք հայ եկեղեցի և գուրգուրանք հայ երգին, պարին, ասմունքին, նուագին, թատրոնին և ընդհանրապէս հայ մշակույթին:

Այս բոլորին մէջ սակայն ամէնէն կեդրոնական տեղը կը գրաւէ հայ ընտանիքը: Հայ ազգը գոյատևելու համար պետք է, որ ունենայ հայ առողջ ընտանիքներ:

Առողջ ընտանիք երբ կ'ընենք կը հասկնանք հայր, մայր և զաւակներ, որոնք ԿԸ ՄԻՐԵՆ ու ԿԸ ՅԱՐԳԵՆ գիրար: Այդ սիրալիր կապը իրար միջև հիմնուած է հնազանդութեան, հաւատարմութեան և փոխադարձ գոհողութեան սկզբունքներուն վրայ:


Մեր մեծերը ըսած են թէ հայ ընտանիքը սուրբ է, որովհետև հոն կայ սէր, նուիրում, խաղաղութիւն և ուրախութիւն:

Հայ ընտանիքի կարևոր սինն է հայ մայրը: Օրինակելի է այն մայրը, որ շատ անգամ կը գոհէ իր հանգիստը, իր գուարճութիւնները, երբեմն նաև իր քունը իր զաւակներուն առողջութեան ու ապահովութեան համար: Հայ մայրը մայրական անհուն սիրով կը սրբագրէ իր զաւակներուն սխալները և համբերութեամբ բացատրութիւն կու տայ անոնց հարցումներուն: Տիպար մայրը կը դաստիարակէ զանոնք, որ ըլլան քաղաքավար ու հնազանդ: Ինչպէս նաև կ'օգնէ իր զաւակները, որ զարգացնեն իրենց մէջ ձիրքերն ու կարողութիւնները:

Այս բոլորին կողքին, հայ մայրը կը սորվեցնէ իր երեխաներուն ըլլալու հայրենասէր ու հայասէր: Ան կը փոխանցէ իր զաւակներուն հայ լեզուի, հայ գիրի, հայ գիրքի և Հայոց Պատմութեան սէրը: Այսպիսով ան կը փոխանցէ իր զաւակներուն հայկական շունչ և կ'արթնցնէ անոնց մէջ, հայ ազգին պատկանելու գիտակցութիւնը:

Հպարտ ենք հայ ժողովուրդի բոլոր գիտակից մայրերով: Հերոսներ են մասնատրաբար այն մայրերը, որոնք կը ծնին հերոս զաւակներ՝ հայրենի հողը պաշտպանող:

Կը խոնարհիմք հերոս մայրերու ու իրենց կտրիճ զաւակներու առջև:



100 ԱՄԵԱԿ ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԻՆ

Համաշխարհային Ա. պատերազմէն ետք, Ֆրանսայի Սևր քաղաքին մէջ, համաձայնութիւն մը կնքուեցաւ յաղթական դաշնակից պետութիւններու և պարտուած Թուրքիոյ միջև:

Դաշնակից պետութիւն ըսելով կը հասկնանք Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, Ճափոն ինչպէս նաև անոնց դաշնակիցները՝ Հայաստան, Պելճիքա, Յունաստան, Հիճազ՝ ներկայի Մեծնախան Արաբիա, Լեհաստան, Փորթուկալ, Ռումանիա, Սերպիա, Խրուաթիա, Սլովենիա և Չեխոսլովաքիա:

Այս պատմական համաձայնագիրը կը կոչուի Սևրի դաշնագիր, որ տեղի ունեցաւ 10 Օգոստոս 1920-ին: Աւետիս Ահարոնեան ներկայացաւ Հայաստանի կառավարութեան կողմէ և Պօղոս Նուպար Փաշա՝ արևմտահայաստանի կողմէ:

Այս դաշնագրի համաձայն Հայաստանին պիտի միացուէր Վան և Պիթլիս նահանգներու մեծ մասը, Մուշն ու Կարինը, ինչպէս նաև Տրապիզոնի նահանգին արևելեան մասը: Այսպիսով Հայաստան պիտի ունենար 160, 000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն:

Պարտուած Թուրքիա համաձայնեցաւ, ստորագրեց և ընդունեց, որ Ամերիկայի նախագահ Ուիլսոնը գծէ ամբողջ շրջանի նոր քարտէսը:



100 ԱՄԵԱԿ ՈՒՒԼՍԸՆԻ ԻՐԱԿԱՐԱՐ ՎՃԻՌԻՆ

Ինչպէս որ Սևրի դաշնագրի 100 ամեակն է, նոյնպէս ալ Ամերիկայի նախագահ՝ Ուոտրօ Ուիլսոնի իրաւարար վճիռին 100 ամեակն է: Վերջապէս նախագահ Ուիլսոնը ինքն էր, որ ստանձնեց Հայաստանի նոր սահմանները գծելու պարտականութիւնը և ինքն էր, որ 22 Նոյեմբեր 1920-ին պատրաստեց Հայաստանի նոր քարտէսը, Սև Ծովուն վրայ ելք մը տալով մեր հայրենիքին:

Մեր ձայները միացնելով Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդութեան ձայնին, այսօր բոլորս թրքական պետութենէն կը պահանջենք.

-Ճանաչում:
Թուրքիա պետք է ընդունի, որ ինք կատարած է Հայոց Յեղասպանութիւնը:


-Ներողութիւն:
Թուրքիա ներողութիւն պետք է ըսէ հայ ժողովուրդին իր կատարած Յեղասպանութեան և երկար տարիներ Յեղասպանութիւնը ընդունած չըլլալուն համար:

-Կրթում և յիշատակում:
Թուրքիա պետք է տեղեկացնէ թուրք ժողովուրդին Հայոց Յեղասպանութեան փաստին մասին: Այդ մէկը պետք է յիշուի գիրքերուն մէջ և ամէն տարի Ապրիլ 24-ին ոգեկոչուի:

-Գոյքի վերադարձը. գոյքի, մահուան և տառապանքի փոխհատուցում:

Յեղասպանութեան ընթացքին, Թուրքիա ոչ միայն բնաջնջեց հայ ժողովուրդը, այլ՝ գրաւեց անոր հողերը, եկեղեցիները, այգիները, ցանքերը, անասունները, տունները և ամէն ինչքերը, ուստի ան պետք է այս բոլորին արժէքով, ինչպէս նաև նահատակուած ու տառապած ժողովուրդի փոխարէն գումար վերադարձէ հայ ժողովուրդին:

ՀՊԱՐՏ ԵՄ ՈՐ ՀԱՅ ԵՄ,
ԻՆԾԻ ՆՄԱՆ ՀԱՅ ԷՐ ԴԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ



Այս տարի մեր նշանաւոր հեքիաթագիրերէն Դազարոս Աղայեանի ծննդեան 180-ամեակն է: Ան ծնած է 1840-ին Թիֆլիս: Աղքատ ընտանիքի գաւակ, դժբախտ մանկութիւն մը անցնելէ ետք, 20 տարեկանին ձգած է իր հայրենի տունը ու անցած՝ գործի:

Աշխատած է տպարանի մը մէջ, ուր ծանօթացած է իր ժամանակի կարգ մը գրողներուն: Ընթերցասէր, ուշիմ և աշխատասէր ըլլալով, ինքնաշխատութեամբ լաւ սորված է հայերէն լեզուն և ինքն ալ սկսած է գրել: Աւելի ուշ, դարձած է նոյնիսկ խմբագիր և ուսուցիչ: 1895-ին ձերբակալուած է ցարական կառավարութեան կողմէ և քանտարկուած:

Դազարոս Աղայեան Արևելահայ գրականութեան առաջին **հեքիաթագիրն** է և կը նկատուի առաջին **վիպագիրներէն** մէկը: Ժողովուրդը զինք շատ սիրած է, որովհետև ժողովուրդին սիրած նիւթերուն մասին գրած է՝ պարզ ու հասկնալի լեզուով: Իր հեքիաթներուն մէջ միշտ կը յաղթէր բարին: Կը քաջալերէր ձեզի որ կարդաք իր հեքիաթներէն «Անահիտ»-ը և «Արեգնազան»-ը:

Դազարոս Աղայեան շատ սիրած է հայերէն լեզուն և ըսած է. «Մի՛ ամչնաք մեր լեզուն, փողոցէն անցած արևն բարձր խօսեցէք, որ ամէնքը, օրարներն ալ զգան թէ կայ հայ ժողովուրդ և հայ լեզու, որ ոչ մէկ բանով պակաս չէ որիչ լեզուներէն»:

Ես ալ հայ մըն եմ, պէտք է ստածեմ, որ ինչ կրնամ ընել իմ ազգիս համար:

Սորվինք՝

- 1) Հեքիաթագիրը հեքիաթներ (fairy tale) կը գրէ:
- 2) Վիպագիրը վէպեր (novel) կը գրէ:

ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱ ՏԱՃԱՐԸ

Այս Սոֆիայի կամ Սուրբ Սոֆիայի տաճարը շինուած է 537 թուականին, Բիզանդական կայսրութեան ժամանակ: Ան իրահատուկ եղած է իր գմբէթով և ծանօթ է աշխարհին իր հարուստ ճարտարապետական շինուածքով: Ան երկար տարիներ եղած է յունական քրիստոնեական տաճար և պատրիարքի նստավայր: Մօրաւորապէս հազար տարի (մինչև 1520 թուական) այս տաճարը եղած է աշխարհի ամէնէն մեծ տաճարը: Աւելի ուշ, երբ շրջանը գրաւուած է թուրք բարբարոսներու կողմէ, 29 Մայիս 1453-ին Սուրբ Սոֆիայի տաճարը վերածուած է օսմանական մզկիթի: Այս Սոֆիա, որ եղած է Բիզանդական «Ոսկէ Դարի» խորհրդանիշ, իբրև մզկիթ օգտագործուած է 478 տարի, 1453-էն մինչև 1931 թուական: Չորս տարի, որպէս ոչ մզկիթ, ոչ ալ տաճար մնալէ ետք, 1 Փետրուար 1935-ին վերածուած է թանգարանի, և օգտագործուած է իբրև թանգարան մինչև վերջերս՝ 10 Յուլիս 2020: Սակայն ներկայի թուրք կառավարութեան ծայրայեղ իսլամական ձգտումները, քանի մը ամիսներ առաջ, թանգարանը վերածեցին դարձեալ մզկիթի: Հակառակ որ աշխարհի ամէն կողմէն բողոքներ տեղի ունեցան այս գծով, Թուրքիա պատասխանեց ըսելով՝ թէ այդ որոշումը միայն Թուրքիան իրատուք ունի առնելու: Այսպէս, Թուրքիա այսօր կ'աշխատի, որպէսզի ան օր մը իրականացնէ իր անցեալի Օսմանական պետութեան Փանթուրանական ծրագիրը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ



Ասեղնագործութիւնը կտաւի կամ կտորի վրայ ասեղով տարբեր տեսակի նկարներ հիւսելու արուեստն է: Պատմութեան ընթացքին, դարեր շարունակ հայուհիներու շատ գեղեցիկ ու գրաւիչ ասեղնագործ աշխատանքներու մեծ հոշակը ծանօթ եղած է ամբողջ աշխարհին: Ան կը նկատուի հայկական մշակոյթի կարևոր մարզերէն մէկը, սակայն դժբախտաբար մշակութային ցեղասպանութեան հետևանքով մեծապէս տուժած է: Այսպէս՝ 1915-ի ցեղասպանութեան ժամանակ թուրքերը գողցած ու ոչնչացուցած են ասեղնագործութեան հազարաւոր օրինակներ և քանդած են Արևմտեան Հայաստանի և Կիլիկիոյ ասեղնագործութեան հարիւրաւոր դպրոցները:

Հայկական ասեղնագործութիւնը զարգացած է երեք տարբեր ուղղութեամբ.

1- Առևտուրի մէջ

Բազմաթիւ աղբիւրներու մէջ, ուշագրաւ փաստեր կան թէ ինչպէս հայոց թագաւորները հայկական ասեղնագործութեան օրինակներ վաճառած են և նոյն փոխարժէքով պատերազմական նստած են կամ լուծած են շարք մը ազգային հարցեր:

2- Եկեղեցիներու ու վանքերու մէջ

Ասեղնագործութիւնը օգտագործուած է զարդարելու եկեղեցի և եկեղեցականները (սքեմ, վեղար, փիլոն, շապիկ, բազկուրար, հողաթափ, թաշկինակ, կայլն):

3- Ժողովուրդի առօրեային մէջ

Հայուհիներ շատ գեղեցիկ գոյներով և տարբեր տեսակի թելերով, յաջողած են զարդարել հագուստներ, տարագներ, գլխարկներ, ծածկոցներ, սաւաններ, վերմակներ, բարձեր, կայլն:


Կ'ըսուի թէ հին ժամանակ, Հայաստանի մէջ, ասեղնագործութիւնը շատ աւելի տարածուած եղած է քան գորգագործութիւնը: Ան տարածուած եղած է հայկական բոլոր նահանգներուն մէջ, մասնաւորաբար՝ Վան-Վասպուրականի, Կարինի, Շիրակի, Միւսիք-Արցախի, Կիլիկիայի շրջաններուն մէջ, ինչպէս՝ Այնթապ, Մարաշ, Սվազ, Ուրֆա կայլն: Անոնցմէ իրաքանչիւրը ունի իր յատուկ ձևերն ու տեսակները, բայց և այնպէս բոլորն ալ կը պահպանեն իրենց ազգային միասնական ոճը:

Գիտէիք թէ

Այս Սոֆիա տաճարի գմբէթը, երկրաշարժներու պատճառով քանի մը անգամ քանդուած ու վերաշինուած է:

Հերարքրբրական է, թէ ինչպէս, 989 թուականի երկրաշարժէն ետք, բիզանդացի Բարսեղ Բ. Կայսրը, Պոլիս հրաւիրած է հայ նշանաւոր ճարտարապետ Տրդատը, որպէսզի վերականգնէ գմբէթը:

Ճարտարապետ Տրդատը, որ նաև քանդակագործ էր, մեծ վարպետութեամբ կը յաջողի շինել աւելի բարձր, աւելի գեղեցիկ և աւելի ամուր գմբէթ մը, որ կը մնայ մինչև այսօր:



ԻՆՉՈՐԻ ԵՐԿԻՆՔԸ ԿԱՊՈՅՏ Է

Տեսնենք միասին թե ինչու առանց ամպի երկինքը կապոյտ է:

Արևը կը շողայ և կ'արձակե ճերմակ ճառագայթներ: Այդ ճերմակ լոյսը կազմուած է եօթը գոյներէ, որոնք մեր բոլորին ծանօթ ծիածանի գոյներն են. կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, բաց կապոյտ, մուգ կապոյտ և մանիշակագոյն: Արևի ճառագայթները հասնելու համար Երկիր մոլորակ կ'անցնին օդի շերտերէն: Այն օդը որ մենք կը շնչենք իր մէջ կը պարունակէ թթուածին (oxygène O2), ազոթ (N), ածխաթթու կազ (Dioxyde de Carbone CO2), ջուր, ծուխ, փոշի և այլ անտեսանելի մանրէներ: Երբ Արևի ճառագայթները իրենց եօթ գոյներով կ'անցնին օդի հաստ շերտին մէջէն, անոնք հոն կը հանդիպին օդին մէջ գտնուող տարբեր մասնիկներուն: Այդ մասնիկները շատ ատելի կը ցրուեն մանիշակագոյն, բաց կապոյտ ու մուգ կապոյտ ճառագայթները քան մնացեալ գոյնի ճառագայթները:

Լաւ է գիտնալ նաև թէ լոյսը ունի տարբեր չափի ալիքներ: Լոյսի ամէնէն երկար ալիքները կարմիր ճառագայթներն են և ամէնէն կարճերը՝ մանիշակագոյն ճառագայթները: Լոյսի կարմիր ալիքները լաւ չեն կրնան ցրուիլ մինչ կապոյտ ալիքները լաւ ձևով կը ցրուին ու կը տարածուին: Ահա թէ ինչու երկինքը կապոյտ է:

ԻՆՉՈՐԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԻՆ ԵՐԿԻՆՔԸ Կ'ԸԼԼԱՅ ԱԻԵԼԻ ԿԱՐՄԻՐ

Մայրամուտին, երբ Արևը մար կը մտնէ, ան շատ ատելի մօտ կ'ըլլայ հորիզոնին: Հետաքրքրական է թէ որքան որ ան մօտ է հորիզոնին, այնքան անոր ճառագայթները ատելի երկար ժամանակ կ'անցնեն օդի հաստ շերտին մէջ: Եւ նկատի ունենալով որ լոյսի ամէնէն երկար ալիքները կարմիր ճառագայթներն են, ուրեմն մայրամուտին երկինքը կ'ըլլայ կարմիր:

Ո՛վ կ'ուզէ ըլլալ բազմազէտ

1- Ինչ է Շուշիի պատմական եկեղեցին անունը

- ա) Սուրբ Աստուածածին
- բ) Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց
- գ) Սուրբ Փրկիչ
- դ) Սուրբ Յակոբ

2- Հայ ազգը ապրելու ու զարգանալու համար պէտք է ունենայ...

- ա) առողջ հայ ընտանիք, հայ դպրոց, հայ եկեղեցի, հայ մշակոյթ և հայրենիք
- բ) հիւանդանոցներ
- գ) գիտնականներ
- դ) դերասաններ

3- Ո՛վ է հայ ընտանիքի կարևոր սինը

- ա) Հայ հայրը
- բ) Մեծ հայրիկը
- գ) Հայ մայրը
- դ) ընտանիքի զաւակները

4- Նախագահ Ուիլսոնի քարտէսով, ո՞ր ծովուն վրայ ելք մը կ'ունենար մեր հայրենիքը

- ա) Կասպից Ծով
- բ) Միջերկրական Ծով
- գ) Սև Ծով
- դ) Վերոյիշեալ պատասխաններէն ոչ մէկը

5- Բոլորս թրքական պետութենէն կը պահանջենք՝ ճանաչում, ներողութիւն, կրթում և յիշատակում և գոյքի վերադարձ

- ա) Ճիշդ
- բ) Միսալ

6- Ո՛վ է Ղազարոս Աղայեան

- ա) Արևելահայ գրականութեան առաջին հեքիաթագիրը

- բ) Արևելահայ գրականութեան առաջին բանաստեղծը
- գ) Արևմտահայ վիպագիր մը
- դ) Արևմտահայ պատմաբան մը

7- Ո՛վ ըսած է «Մի՛ ամչնաք մեր լեզուէն, փողոցէն անցած արեւն բարձր խօսեցէք, որ ամէնքը, օրարներն ալ զգան թէ կայ հայ ժողովուրդը և հայ լեզու, որ ոչ մէկ բանով պակաս չէ ուրիշ լեզուներէն»:

- ա) Եղիշէ Չարենց
- բ) Ալեոիք Իսահակեան
- գ) Միքայէլ Նալպանտեան
- դ) Ղազարոս Աղայեան

8- Հայկական ասեղնագործութիւնը զարգացած է ...

- ա) առևտուրի մէջ
- բ) եկեղեցիներու ու վանքերու մէջ
- գ) ժողովուրդի առօրեային մէջ
- դ) Վերոյիշեալ բոլոր պատասխանները

9- Ո՛վ շինած է Այա Սոֆիա կամ Սուրբ Սոֆիա տաճարի գմբէթը

- ա) Հայ Ճարտարապետ Տրդատ
- բ) Թորոս Թորամանեան
- գ) Իսիտոր Միլեթացոյ
- դ) Վերոյիշեալ պատասխաններէն ոչ մէկը

10- Լոյսի ամէնէն երկար ալիքները ո՞ր ճառագայթներն են

- ա) Կարմիր ճառագայթներն են
- բ) Կարպոյտ ճառագայթներն են
- գ) Ծիրանագոյն ճառագայթներն են
- դ) Վերոյիշեալ պատասխաններէն ոչ մէկը



Մանկապատանեկան Գործողը կը հովանաւորեն ԲՕՍ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Գեղաձայն (514) 332-3757
Գեղապատճէն (514) 332-4870
Email: sylvia@horizonweekly.ca

Թիւր պատրաստեց՝
Անահիտ Պալեան